

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՄԻՋՕՐԷ

Զըւարթ, պայծառ միջօրէ,
Անդորրադեղ ու չքնաղ...
Կը ծաւալի, կը բուրէ
Ամէն կողմէն նրբամաղ
Խաղաղութիւնն անսահման
Երազներու կախօրրան:

Ու ըստուերներ երազկոտ,
Մարմանդին վրայ երկարած,
Եւ թաւուտքի մէջ սարսուռ
Դարձած տեսիլ լուսամած՝
Կը պարուրեն հողիներն,
Հուր տենչերով տարուբեր:

Կը սիրեմ հեւքն անուշակ
Խոտին, թուփին նորածին,
Եւ թարմութիւնն ալյուշակ
Նրբածաղիկ ցօղունին,
Ուր մարգարիտն առտըւան
Կ'ըլլայ հրաշէկ ատրուշան:

Օ՛ քաղցրութիւնն արեւուն
Որ կը դըղուէ կաթողին
Այտերն աղուոր մարգերուն
Կանաչադեղ ու ջերմին.
Օ՛ դարնային պարզութիւն,
Որ կը շքնէ բոյր ու դոյն...:

Կապոյտն ի վար կը ծորի
Երկինք մը ջինջ ու պայծառ,
Երանութեան ցանկալի
Անչեղ ուղի եւ կամար.
Զոյգ ափերու հեռաւոր
Միացման լար դաշնաւոր:

Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ

ԳԱՐՆԱՆ ԳԻՇԵՐ

Ես կը ննջեմ, մինչդեռ կ'երգեն առուակներ,
Ո՞վ կը լըսէ արդեօք իրենց մեղեդին.
Մի՞թէ նոր վարդ պիտի բացուի այս գիշեր
Աւետելու նոր Մայիս մ'ալ աշխարհին:

Հովն անոյշ է բուրաստանէ բուրաստան,
Լուսնակն անոյշ առուններու երեսին.
Ես կ'երազեմ մըլաղին երգն առտըւան
Հասկերով լի սեմին վըրայ Յունիսին:

Երանի՛ թէ ինծի համար ալ բացուէր
Նոր առաւօտ, արեւ մը նոր երգերու,
Ու կըմէնէի հին օրերու մանուկ սէր

Սիրտեր տրտում չաղոտ վարդի փոխելու,
Սըրինդն երգէր, երգէր ամէն մէկ առու
Ու ժպտէինք, հէգ մարդկութիւն, ես ու դու:

ՅՆՈՐՔ

Իրիկնային մեղմ ու թախծոտ մեղեդին
Շուքերու մէջ տարտամօրէն կը շրջի,
Ու կը դիմէ հառաչական լուսնակին
Աղերսելով արծաթ թեւեր Յընորքի:

Այս գիշեր ալ, գիտեմ, լացող սիրտեր կան.
Քիչ մը ցընորք ունենալու ըսփոխանք,
Իրենց վէրքերը լոյսին տակ ըստացան,
Քիչ մը ցընորք ունենալու անըրջանք:

Պէտք ունի սիրտն երկինքներու աստղադարդ,
Որ գիշերները փերեղման չըթըւին
Եւ երազէ իր սիրած կեանքն ամէն մարդ:

Քիչ մը ցընորք պէտք է այս հէգ սիրտերուն
Որ ժպտիտով նային վաղուան արեւին,
Քիչ մը ցընորք մէջը մեղրին քաղցրութիւն:

ՄԵԽԱԿՆԵՐԾ

Սէրն արիւն է սափորին մէջը սրտին,
Եւ կը զոյգայ մարմինն ուժգին յորդումէն,
Թուփերու պէս որ մանկաբար կը հրճունին,
Երբոր կ'անցնի ջուրի հոսանքը մօտէն:

Մեխակներու աշուպէս փոքրիկ իմ ածուն
Կարմրեցաւ յանկարծ առտու մ'արեւոտ:
Նոր կոկոններ, նման արդու շրթներուն,
Բացուած էին բուրումներու մէջ նարօտ:

Կը հրճուէր օդն առաջատի պէս հարսի,
Կ'երգէր զեփիւսն արեւուն մէջը նստած:
Քերթուած մէջը այս մուսաններուն վաղեմի:

Իմ մանկութեանս կարծես տեսայ վերադարձ,
Երբ մայրենի լանջքն էր ածու մը փոքրիկ,
Երբ գիւղը մեր Մայիս մըն էր գեղեցիկ:

ՁԵՌՔԵՐԴ

Ձեռքերըդ այդ շուշանի պէս ըստխտակ
Որ սրբութիւն կը շօշափեն եւ միշտ լոյս,
Հոգիիդ զոյգ ճաճանչներն են բոցարձակ
Տարածուելու եւ ըլլալու ամէնուս:

Անոնք չինուած են խոնարհներն օրհնելու,
Հանգիստ տալու եւ խրոսոված սիրտերուն,
Մութ գիշերներն՝ աստղով երկինք լեցնելու,
Անոնք չինուած են բերելու մեզ գարուն:

Ո՛հ, տարածէ հորիզոնէ հորիզոն,
Դու մըշակ ես, դու քահանայ եւ կամ մայր,
Թող լիառատ եղեամ իշնայ հոս եւ հոն,
Թող մատներէդ կաթի շքնորհ բարեբար:

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

• ԳՐԱԽՈՍԱԿԱՆ •

ՊԱՏԱՐԹԻԻՆ ԵԻԴՈՎԻՈՅ ՀԱՅՈՑ. —
Գրեց՝ Արշակ Ալպոյաճեան: Լաքա-
կազմ, ուրաժալ 1886 էջ, նկարագարդ,
Գահիրէ, 1952:

Ահապատմաւոր գործ մըն է որ մեզի կու-
տայ վատաւաւոր եւ տոկուն Ալպոյա-
ճեան: Տոկուն անոր համար որ նման աշ-
խատութիւն մը գլուխ հանելու համար՝
Յորի համբերութիւնը պիտի չբաւէր:

Ահապատմաւոր շնորհակալ ըլլալու եւզո-
կիդ Կրթասիրաց Միութեան (Նիւ Եորք),
որ մեկենաս եւ հրատարակիչ եղած է աշ-
խատութեան:

Ալպոյաճեան, որ Կեսարիոյ Հայոց մա-
սին երկհատոր համալսարանական
գործ մը տուած էր արդէն, իր Եւրոպիա-
յով անգամ մըն ալ ցոյց տալու եկաւ իր
անսխալարիւնի կարողութիւնը թրքահա-
յոց պատմութեան մասին, ըլլալ ան հնա-
գոյն, ըլլալ նաեւ նոր շրջաններու մասին:

Բնական է որ նման գործ մը յաճախ
ունենայ փոքր մոռացումներ, վրիպակներ
պատմութեան, ինչ ինչ աղբիւրներու ան-
պատմութիւն, որոնք որեւէ կերպով կա-
ծանութիւն, որոնք որեւէ կերպով կա-
տարուած գործին արժէքը չեն նուազե-
ցնուիր: Եթէ մենք հոս պիտի տանք քանի
մը յաւելուածական ծանոթութիւններ,
ատիկա չենք կատարել՝ գործը խորհան-
քի ենթարկելու այսպիսի նպատակով,
այլ պարզապէս այս մեծարժէք գործին
ամբողջացման համար մեր փոքր լուծան
տուած եւ զայն աւելի կատարեալ տեսած
ըլլալու միակ ցանկութեամբ է:

Ալպոյաճեան ուր որ ինք բուն աղբիւր-
ներէն օգտուած է՝ կրնանք ըսել որ իր աշ-
խատութիւնը գրեթէ անկարօտ է որ եւ
է, նոյնիսկ զոյգն սրբագրութեան կամ
ճշտութիւն: սակայն ուր որ միջնորդ ունե-
ցած է մէկը՝ օտար աղբիւրներէն ոմանց
մէջէն օգտուելու համար, այն ատեն դրժ-
բախտարար վաղեմի եւ սիրելի բարեկամս

սկամայ զոհ դացած է իր միջնորդին ա-
պիկարութեան: Ասիկա պիտի երեւայ մեր
այս գրախօսականին ինչ ինչ մասերուն
մէջ:

Գործը կը սկսի նախ Յառաջաբանով
մը Եւրոպիոյ Կրթասիրաց Միութեան
կողմէ, յետոյ երկու խօսք Եւրոպայի Բնա-
տէկանէ, եւ Ընթերցողներուն խորագրով
նախաբան մը՝ Ալպոյաճեանէ: Յետոյ ի-
րարու կը յաջորդեն Եւրոպիա եւ չրջա-
կայքը իրեն աշխարհամաս, Սահմաններ
եւ Տարածութիւն, Երկրաբանութիւն,
Լեռնագրութիւն, Զրադրութիւն, Բուսա-
կանութիւն, Կենդանական հարստութիւն,
Հանքային հարստութիւն, Կլիմայ, Հա-
ղորդակցութիւն, Վարչական բաժանում-
ներ:

Բ. մասը կու տայ Պատմական անցեալը
հնագոյն ժամանակներէ մինչեւ Մեծն Ա-
ղբաւոր, այսինքն նախ քան Քրիստոս
Գ. դար: Յետոյ հետզհետէ կու տայ՝ Հա-
յերը այս շրջանին մէջ Հռոմէական տի-
րապետութենէն մինչեւ Օսմանեան տիրա-
պետութիւն (1398) եւ անկէ ալ մինչեւ
մեր օրերը: Այս մասին մէջ 233-34 կը խօ-
սի Պապայի շարժումին մասին: Այս շար-
ժումին մասին կը խօսի շահեկանօրէն նաեւ
Պար Հէպրայուս Ապիւլ Պարաճ, որ սա-
կայն բաւական կը տարբերի Ալպոյաճեանի
բաժաններէն: Կը խորհիմ որ իր շահեկա-
նութեան համար կ'արժէ հոս միջանկեալ
թարգմանել Պար Հէպրայուսի ժամանա-
կագրութեան այս հատուածը:

«Եւ Յունաց 1552 (Քրիստոսի 1241)
տարւոյն, որ Արաբացոց 638 (Քրիստոսի
1240) տարին է, Դէշլիններու եղանակին
(Հոկտեմբեր եւ Նոյեմբեր), Արաբացոց
հաւատքին վերաբերող շար հերձուած մը
յայտնուեցաւ: Ինչ որ Թիւրքէն, ծեր եւ
ճգնաւոր մարդ մը, որուն անունը Պապա
էր, համբաւ հանեց Ամասիոյ երկրին մէջ:
Ան ինքզինքը Ռասուլ (Առաքեալ) կոչեց,
որովհետեւ կ'ըսէր որ ինքը Աստուծոյ ճշ-
մարիտ Առաքեալն էր, եւ թէ Մահմէտ
ստախօս մըն էր, եւ Առաքեալ մը չէր: Եւ